# Դաս 38. «Սասունցի Դավիթ» էպոսի մյուս կերպարները

**Մկրտիչ Խերանյան**

**Սասնա տուն**

**(հատված)**

*Ասում են՝ ամռան խաղաղ մի գիշեր*
*Հովիվն իր կորած գառն է ման գալիս,*
*Ագռավուքարի մոտով անցնելիս*
*Տեսնում է նրա քարե դուռը բաց*
*Ու ներս է մտնում:*
*Մհերը, այնտեղ՝ քարայրում նստած,*
*Միտք է անում խոր՝ ձեռքը ծնոտին,*
*Մեծ Թուր Կայծակին իր գոգը դրած*
*Ու կողքը կանգնած հրեղեն իր ձին:*
*– Բարև, Մհե՛ր:*
*– Բարո՛վ եկար, հովի՛վ ախպեր,*
*Ուշ գիշերով ի՞նչ ես փնտրում*
*Էս քարերում:*
*– Գառ է կորել, Սասնա՛ Մհեր,*
*Որ չգտնեմ, տերս դժնի*
*Տունս գլխիս փուլ կբերի,*
*Ինձ դուրս կանի:*
*– Էդպես չա՞ր է աշխարհը դեռ...*
*– Չա՛ր է, չա՛ր է, Սասնա՛ Մհեր:*
*– Էլի էնպես խեղճը դարդում,*
*Զորեղն ուրա՞խ...*
*– Հա՛, Մհե՛ր, հա՛:*

– Լուծն ու շղթան չե՞ն թոթափում...
– Չէ՛, Մհե՛ր, չէ՛:
Ռամիկը դեռ անմիաբան
Ու շա՜տ խեղճ է:
Ապրում են դեռ բաժան-բաժան,
Եվ իշխում է փերը դաժան...
Իսկ դու, Մհե՛ր, ե՞րբ դուրս կգաս,
Կելնես քարե քո զնդանից:
– Երբ որ կանչե ռամիկը ինձ,
Երբ որ լինեն մեկ-միաբան՝
Ընդդեմ չարի ու բռնության,
Էն օր, ահա՛, դուրս կգամ ես,
Կելնեմ քարե իմ զնդանից,
Որ բյուր-բյուրոց հետ միասին
Քանդենք աշխարհ, շինենք նորից...